


---

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ. Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում. Վենետիկից Հռոմ (16-րդ դար), մասն Ա, *Երևան, «Զանգակ» հրատ., 2012, 270 էջ*: Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում. Լվովից Ամստերդամ (17-րդ դար), մասն Բ, *Երևան, «Զանգակ» հրատ., 2014, 398 էջ*:



*Բանասիրական գիտությունների դոկտոր, հայ միջնադարյան գրականության հիանալի գիտակ Վարդան Դևրիկյանն արդեն հրատարակել է «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» եռագրության Ա և Բ հատորները: Ա հատորն ունի ենթավերնագիր՝ «Վենետիկից Հռոմ (16-րդ դար)», իսկ Բ հատորը՝ «Լվովից Ամստերդամ (17-րդ դար)»: Երրորդը, անշուշտ, նվիրված կլինի XVIII դարի հնատիպ գրքին:*

*Այսօրինակ հետազոտությունն ունի իր նախասկիզբը, որի հետքերով գնացել է Վ. Դևրիկյանը՝ հարստացնելով հնատիպ գրքի պատմությունը նոր փաստերով, նոր եզրահանգումներով ու անհրաժեշտ, ցարդ գիտական շրջանառության մեջ չդրված, կարևոր լուսանկարներով, որոնք առավել տպավորիչ են դարձնում հեղինակի ասելիքը:*

*Հայերի՝ դեպի գիրքն ունեցած սերը վկայում է Մաշտոցի անվան Մատենադարանում և աշխարհի տարբեր նշանավոր գրադարաններում հավաքված հայ ձեռագրական հարստությունը: Դրա երկրորդ ապացույցը 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի հիմնած տպարանն է, որում հրատարակված գրքերը դարձան հայ տպագրության առաջնեկները՝ հաստատելով հայի անսահման սերը դեպի գիրքը:*

*1900 թ. հունիսին «Հայկական տպագրություն» գրքի առաջաբանում պատմաբան Լեոն հետևյալ ձևով է ներկայացնում հայերի սերը դեպի գիրքը. «Հայերը, բարեբախտաբար, իրանց ուշքն ու միտքը միայն ոսկի հորթին չնվիրեցին: Նրանց համար կար և մտավոր գործը, որին ծառայեցին թեև համեմատաբար թույլ չափերով, բայց հարատև եռանդով ու տոկունությամբ»<sup>1</sup>: Ինչպես Վ. Դևրիկյանի պատրաստած երկու հատորներն են վկայում, առանց հայ հին տպագրիչների անսահման նվիրման ու զրկանքներին դիմակայելու ջանքերին, հնարավոր չէր*

---

<sup>1</sup> Լ և ո. Երկերի ժողովածու տասր հատորով, հ. V, Երևան, 1986, էջ 125:

աշխարհի ամենատարբեր, հաճախ անգամ ոչ քրիստոնյա երկրներում իրականացնել հայ գրքի տպագրությունը:

1844-ին Ստեփանոս Նազարյանը Կազանի համալսարանի «Տեղեկագրքում» (-1) ռուսերենով տպագրում է «Թոռուցիկ հայացք հայ մատենագրության մինչև XIII դարը» ուսումնասիրությունը, որում ընթերցողի ուշադրությունը հրավիրում է հայերի գրասիրության արտասովոր փաստի վրա: Տպագրության գյուտից հետո հայերը ազգային տպարաններ են հիմնում Հոլանդիայում, Սաքսոնիայում, Անգլիայում, Լեհաստանում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում, ինչպես նաև Մադրասում, Նոր Զուդայում, Մարսելում, Վենետիկում, Մալթա կղզում<sup>2</sup> և, իհարկե, Էջմիածնում: Նրա կարծիքով՝ սա եզակի օրինակ է մարդկության պատմության մեջ, երբ այդքան դաժնություններ տեսած ժողովուրդը, ամենատարբեր մաքառումների մեջ, առանց իր ընդհանուր ուժերի կենտրոնացման, ստեղծել և պահպանում էր մի գիտական ու հարուստ լեզու, որը զարգանում էր բոլոր ուղղություններով<sup>3</sup>:

XVI դարում տպագրված 17 հայերեն գրքերի մեջ գրականագիտական առումով ամենաուշագրվել 1513 թ. տպագրված «Տաղարանն» է: Հակոբ Մեղապարտի տպագրած «Տաղարանը» կազմված է Մեծ Վերածննդի ոգով: Չմոռանանք, որ այդ գիրքը տպագրվեց Վերածննդի կենտրոններից մեկում՝ Վենետիկում, որտեղ նրա ապրած օրերին գործում էին Վերածննդի արվեստի հիմնադիրներից Զորջոնեն (1476–1510) և գերհանճար Լեոնարդո դա Վինչին (1452–1519): Ինչպես տեղին շեշտել է Վ. Դերիկյանը, Հ. Մեղապարտն իր բանաստեղծական ժողովածուն խորագրել է «Տաղարան է սայ հոգոյ և մարմնոյ»: Մեծ Վերածնունդը բոլորովին էլ չջեղվելով քրիստոնեական կրոնի մարդասիրական ուղղվածությունից՝ կրոնական թեմաները մոտեցրեց իրական կյանքին, դրանով մեծացնելով կրոնի ներգործման ուժը: Բացի այդ, հայացք նետելով դեպի մարդկության անցյալը՝ քրիստոնեությունը համարեց անցյալի օրինաչափ ու ճիշտ շարունակությունը:

«Տաղարանը» մասնագիտական հայացքով քննելիս եզրահանգումը մեկն է. այն լիովին համապատասխանում է Վերածննդի պահանջներին: Դա են վկայում նաև Վ. Դերիկյանի բերած այն օրինակները, որոնք ներկայացնում են տպագիր առաջին «Տաղարանի» բովանդակությունը: Գրքի հեղինակն այդ անում է որպես միջնադարի քաջահմուտ ու իրազեկ մասնագետ: Դա է պատճառը, որ հետագոտողը նաև ընդհանուր անդրադարձ է կատարում հայ միջնադարի ձեռագիր ու տպագիր «Տաղարան» ժողովածուներին: Հոգևոր տաղերի կողքին Հակոբ Մեղապարտն իր «Տաղարանում» զետեղել է աշխարհիկ գրականության այնպիսի նմուշներ, ինչպիսիք են Հովհաննես Թլկուրանցու հիասքանչ սիրո երգերը և Ներսես Շնոր-

<sup>2</sup> Ստ. Ն ա գ ա ղ ա ն. Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 10:

<sup>3</sup> Նույն տեղում:

հալու իրական կյանքից քաղված, չափածո խոսքի կատարելությամբ փայլող հանելուկները: Չմոռանանք, որ Վալերի Բրյուսովը «Հայաստանի պոեզիա» ժողովածուի առաջաբանում, իր հիացմունքն արտահայտելով Հովհաննես Թլկուրանցու սիրո տաղերի առիթով, շեշտում է, թե այդպիսի սիրո խոստովանություններ չկան, ո՛չ XIV դարի իտալացի նշանավոր բանաստեղծ Պետրարկայի բանաստեղծություններում, ո՛չ էլ XVI դարի ֆրանսիացի սիրերգակ Ռոնսարի քերթվածներում: Հ. Թլկուրանցու սիրո խոստովանությունները եվրոպական բանաստեղծության մեջ երևան եկան միայն XIX դարում, երբ իրենց քնարական գյուտերն արեցին Ալֆրեդ դը Մյուսեն, Շառլ Բողլերը և Հենրիխ Հայնեն<sup>4</sup>:

Հակոբ Մեղապարտի «Տաղարանին» անդրադառնալիս Վ. Դերիկյանն անհրաժեշտ ձևով բնութագրում է միջնադարյան գրականության այն ժանրը, որի նմուշները հայտնվել են «Տաղարանում»: Ժողովածուում հանելուկների հանդես գալը Դերիկյանն իրավացիորեն համարում է գրական առաջադիմություն: Շնորհալու հանելուկների մասին նույն կարծիքին է ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին, ըստ որի Ներսես Շնորհալին, ծնված լինելով սուրբ Ֆրանսուա դը Ասիզից (Fransois d'Asise) առաջ, ջանացել է քրիստոնեությունն առավել մոտեցնել հավատացյալ ժողովրդին: Նա նույնիսկ գրել է ժամանակի խոսակցական լեզվով՝ հասարակությանն իր ասելիքը լսելի դարձնելու համար: Նրա այդ նորաբանությունից հայ գրականության մեջ ծնվեց մի տաղերգություն, որ զգայական էր արևելյան իմաստով, սակայն իր «խորքում միշտ պահպանում էր քրիստոնեական միստիցիզմը»<sup>5</sup>:

Հատկապես «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» հետազոտության Բ հատորում հեղինակը բարեխղճորեն օգտագործել է քննվող նյութին առնչվող պարբերական մամուլը՝ կատարելով հոգնատանջ, սակայն օգտակար գործ:

Իրավացիորեն Վ. Դերիկյանը հայ գրատպության ձեռքբերումները համարում է շրջադարձային՝ հինավուրց մի ազգի պատմական ընթացքի մեջ. «1966 թ. լույս տեսավ Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմությունը»: Դավրիժեցին դարձավ առաջին հայ հեղինակը, ում գործը տպագրվեց իր կենդանության օրոք: Շնորհիվ այս իրողության՝ հայ գիրքն անցյալի պատմությունից, եկեղեցական ձևից, դավանական վեճերից ու երկնահայաց խոկումներից բացի դարձավ ժամանակի կյանքի արձագանքը: Հայության համար իր ապրած ժամանակը իր հետ սկսեց խոսել հայ գրքով» (էջ 8):

<sup>4</sup> «Поэзия Армении с древнейших времен до наших дней», под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова. М., 1916, с. 54.

<sup>5</sup> David de Sassoun, Epopée en vers, traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Gallimard, 1964, p. 38.

Հետաքրքիր մի նկատում լինվին հիմնավորված է գրքի հեղինակի կողմից: Հայ ժողովրդի պատմական անցյալի որոշ փառահեղ էջեր այնպիսի կնիք են դրել դրանք կրողների ու գիտակցողների վրա, որ նրանք անցյալի հրամայականով փորձում են կարգավորել ներկան: Այդ կնիքի կրողները դարձան շքեղ ու տիեզերահռչակ Անիի գաղթի ճանապարհը բռնած բնակիչների շտապիղները, որոնք անցան սկզբում Ղրիմ, ապա Լվով ու վերածնեցին հայի սերը դեպի հոգևորն ու ազգապահպան սեր-ավանդույթը գրքի նկատմամբ:

Գրքում մանրամասն նկարագրվում է Բաղեշից Լվով եկած քահանա Հովհաննես երեց Քարմատանենցի տպագրական գործունեությունը և նրա լույս աշխարհ բերած գիրքը՝ հատկապես 1616 թ. Լվովում տպագրված «Սաղմոսարանն» ու այդ գրքի նշանակությունը: Քանի որ Վ. Դերիկյանը գիտի նաև հայ մանրանկարչության պատմությունը, ապա ներկայացնում է, թե ինչու էին ձեռագիր մատյանների օրինակով հայ տպագրիչները նորաստեղծ գրքերը զարդարում մանրանկարների տպագրական պատճեններով: Նա նաև դիտել է տալիս տպագիր ու ձեռագիր «Սաղմոսարան»-ների ընդհանրություններն ու տարբերությունները: Պատմական փաստերից պարզ է դառնում, որ հայկական տպարանները XVII դարում, աշխարհի որ ծայրում էլ լինեին, կից էին եկեղեցուն: Վ. Դերիկյանը մշտապես հղումներ է կատարում իրենից առաջ նույն հարցերին այս կամ այն չափով անդրադարձ կատարած հետազոտողներին, ու ճշտում նախկինում տեղ գտած որոշ անճշտություններ ու շփոթներ: Հստակ ձևով բացատրում է, թե ինչպես և ինչու հայ տպագրական գործում երևան են գալիս հայատառ դպտերեն հոգևոր գրքեր: Անհրաժեշտության դեպքում հետազոտողն անդրադառնում է համաքրիստոնեական հոգևոր կյանքում տեղի ունեցած շրջադարձային որոշ իրադարձություններին, որոնք ազդեցություն են թողել նաև հայ տպագրական գործի վրա: Տպագիր գրքերը նույնպես ունեցել են իրենց ճակատագրերը. դրանք երբեմն եղել են հոգատար տերերի ձեռքում. «Փաստերի համադրումը ցույց է տալիս, որ Ռուսինիայում և հատկապես Սուչավայում հայկական ձեռագրերը, վավերագրերը, ինչպես նաև հնատիպ գրքերը պահպանվել են անկորուստ, և մեզ են հասել հնատիպ գրքերի մի քանի հավաքածուներ» (էջ 39):

Միլանի տպագրատանը 1621-ին լույս է տեսել Ֆրանչիսկա Ռիվոլայի «Բառգիրք Հայոց» խորագրով հայերեն-լատիներեն բառարանը, որը, անշուշտ, երևան է եկել միսիոներական նկատառումներով: Սակայն այս բառարանն ունի ուշագրավ մի կողմ, որն այսօրվա լեզվաբանության համար խիստ արժեքավոր է: Ռիվոլան գարգացած հայագետ էր և մեծապես օգտվել է ոչ միայն գրաբարից, այլև կենդանի ժողովրդական լեզվից, որը և իր դրսևորումն է գտել նրա ստեղծած բառարանում: Հայերեն բառերը դրել են ոչ միայն ուղղական, այլև սեռական հոլովով: Նույն բառը բառարանում բերվում էր ոչ միայն բարբառով, այլև գրական լեզ-

վով: Օրինակ՝ ալևոր – հալիվոր, ախբրանալ – եղբայրանալ, աղբիւր – ախբուր, խաց – հաց, եղ – իւղ, հայ – խայ, փղամիտ – կղմինդր (էջ 49): Եվրոպայի առաջին հայագետները, անշուշտ, օգնել են Ռիվոլային ոչ միայն այս բառգիրքը, այլև «Քերականութիւն հայոց» աշխատությունը ստեղծելիս: Քերականության մեջ հայոց այբուբենը ներկայացված է ճշգրիտ տառադարձությամբ: Ռիվոլայի բառգիրքն այնքան ընդունված էր, որ այն 1633-ին վերահրատարակվում է Փարիզում:

Հոռնը, ինչպես XVI դարում, այնպես էլ XVII-ում կարևորվել է հայ գրքի տպագրության գործում: Վ. Դերիկյանը ներկայացնում է Վատիկանի և Հռոմի պապի դեպի հայերն ու Հայաստանն ունեցած երկդիմի վերաբերմունքը: Մի կողմից կաթոլիկության տարածում, որի հետևանքով XVII դ. առաջին կեսին Լեհաստանի հզոր հայկական գաղթօջախը ձուլվեց լեհերին, մյուս կողմից՝ մահմեդականներից հայերի դավանափոխման դեմ կտրուկ միջոցառումներ: Ովքեր եղել են Վատիկանի աշխարհի քարտեզները ներկայացնող դահլիճում, տեսել են, որ XV դարի քարտեզներում Մեծ Հայքի աշխարհագրական տարածքի վրա գրված է Հայաստան, Կիլիկիայի համապատասխան դարերի քարտեզի վրա՝ Կիլիկյան Հայաստան:

2005 թվականին Մոնրեալի Աստվածամոր տաճարի հսկայատարածք ցուցաբերում բացվել էր Հռոմի վերջին պապին՝ Պողոս Վեցերորդին նվիրված մեծ ցուցադրություն: Այդ ցուցադրությունը սկսվում էր Հայաստանի մասին պատմող եռալեզու մեծ պաստառով, որի վրա նշված էր, որ Հայաստանը աշխարհի առաջին քրիստոնյա երկիրն է: Ցուցահանդեսում կար գրաբարով գրված զծագրական թղթի չափեր ունեցող մի մեծ նամակ, որը Հալեպի թեմի առաջնորդն XVI դարում ուղղել էր Հռոմի պապին՝ խնդրելով իրենց օգնել ազատվելու մահմեդականների լծից: Նամակը գրված էր անթերի ձեռագրով և լուսանցքներում ուներ բարձրաձաշակ գունավոր մանրանկարներ: Այսօրինակ հին հարաբերությունները նույնպես լուսաբանված են Վ. Դերիկյանի գրքում:

1645 թ. Հռոմում լույս է տեսնում Կղեմես Գալանոսի «Քերականական եւ տրամաբանական ներածութիւն» գիրքը: Այս գիրքը Ռիվոլայի քերականությունից առավել էր նրանով, որ գրված էր հայերենով, տերմիններին զուգահեռ դրված էր նաև լատիներենը: Իսկ «Միաբանութիւն Հայոց Սուրբ եկեղեցւոյն, ընդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» գիրքը (1650 թ.) հայերին կաթոլիկ դարձնելու իսկական դիվանագիտական պրոպագանդա էր: Վ. Դերիկյանն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է այս գրքի բոլոր վտանգավոր կետերը:

Տպավորիչ է հեղինակի գրքի «Հայկական տպագրության յոթերորդ կայանը՝ Նոր Ջուղա» բաժինը: Նոր Ջուղայում խոշոր վաճառականները կարողացել էին հասնել տնտեսական բարեկեցության, և սա հիմք էր տպագրական գործ կազմակերպելու համար:

XVII դարում Հայաստանում վերստին երևան են գալիս ադանդավորական շարժումներ, որոնք մեծապես վնասում էին հայ ժողովրդի միասնությանը: Նոր Ջուղայի տպագրական կենտրոնը կոչված էր նաև նման ազգապառակտիչ երևույթները կանխելու: Ադանդավորական շարժման պարագլուխ Մեխլուին դատապարտելու դերում հանդես է եկել Ամենայն Հայոց կաթողիկոս Մովսես Գ - Տաթևացին, որը ուսուցիչն էր տպարանի հիմնադիր Խաչատուր Կեսարացու:

Վ. Դերիկյանի աշխատության մեջ ջերմ բնութագրերով ներկայացված են Մուրբ Մովսես Գ Տաթևացին (1629–1632) և նրա աշակերտ Փիլիպոս Ա. Աղբակեցին (1632–1655), որոնց կաթողիկոսության շրջանում հայ հոգևոր կյանքը Հայաստանում ծաղկում է ապրել: Նոր Ջուղայի տպարանում 1638-ին տպագրվում է օրինակելի «Սաղմոսարան», իսկ 1641-ին «Հարանց վարք» ժողովածուն: Իսկ երրորդ գիրքը «Խորհրդատետրն» էր: Խաչատուր Կեսարացու տպագրական գործի բարձրակետն էր «Ժամագիրքը» (1642 թ.), որը տպագրվեց ավելի բարձրորակ թղթի վրա և կարդալու համար ավելի հարմար խոշոր տառերով: Այս գրքերի տպագրությունը մեծապես նպաստելու էր հայկական եկեղեցիներում ծիսական կարգը օրինակելի և ներգործուն դարձնելու: Ուշագրավ է, որ Խաչատուր Կեսարացու տպարանում լույս տեսած «Տոնացույցի» վերջում կա հետաքրքիր փաստեր պարունակող հիշատակարան:

Վ. Դերիկյանը Ջուան (Ջիովանի) Բատիստա Բովիսի տպագրական գործունեությունը (Վենետիկ) նկարագրելիս նկատում է, թե Իտալիայում հայերեն գրքեր տպագրելիս ունեցել են նաև շահի ազդակը, որը, սակայն, երբեմն չի բավարարել այն փնտրողի հույսերը:

XVII դարում տպագրված գրքերի մեջ է եղել Ներսես Շնորհալու գլուխգործոցը՝ «Յիսուս որդի» ծավալուն երկը, որը լույս է տեսել 1660-ին՝ Հռոմում: Հայ հնատիպ գրքի գիտակ Ռ. Իշխանյանից հետո Վ. Դերիկյանը ևս համեմատում է «Յիսուս որդի» երկի Անկյարացու և Բովիսի հրատարակությունները և հանգում է նախորդ հետազոտողի եզրահանգումներին: Բովիսը Անկյարացու հետևողությամբ 1660-ին Վենետիկում տպագրել է նաև նոր «Սաղմոսարան»:

Վ. Դերիկյանը խիստ տեսանելի գիտական ճամփորդություն է կատարում XVII դարի հայ գրքի տպագրության կենտրոններում՝ Լվով, Միլան, Փարիզ, Հռոմ, Լիվոռնո, Վենետիկ, Նոր Ջուղա՝ տպավորիչ ու մանրամասն ներկայացնելով տպագրված գրքերը՝ միաժամանակ երախտագիտություն առաջացնելով տպագրիչների նկատմամբ, որոնք ընթերցողի առաջ կանգնում են որպես հայ մատենագրության կենդանի ու անմոռաց նվիրյալներ: